

ցից եւ ո՞րպէս կամ ո՞ւր նմանեցուցից զԱյեա
 115 Սօֆիան, ես որ յիմար եւ տկարս եմ ի մէջ
 ամենայն կարգաւորաց. զի շինեալ է ի սուրբ
 թագաւորաց եւ օրհնեալ ի սուրբ հայրապե-
 տաց, փառաւորեալ ի հրեշտակաց: Որ եւ
 ընկալաւ յինքն զՅԺԸ հայրապետս Նիկիոյ եւ
 120 զԾԾնն. որ պատվեցաւ ի նոցա սրբութենէն:
 Արդ որպէս պարծի մեծն Հոռոմ Պետրոսիւ եւ
 Պօղոսիւ, նոյնպէս մեծս Կոստանդնուպօլիս
 տիեզերաւոյս եւ աստուածաբան վարդապե-
 տօքս՝ Գրիգոր Աստուածաբանով եւ Յոհան-
 125 նու Ոսկերերանիւ: Նաեւ այլ բազմահաւաք
 եւ յոգնախումբ նշխարս ունի յինքն ամփո-
 փեալ, իբրեւ զգանձս պատվականս եւ զան-
 զին մարդարիտս:

Որ եւ մեծամեծ սքանչելիս առնէ սուրբն
 130 Սոփիամինչեւ ցայսօր. զորս ի բազմաց զմինն
 ասացից որ ի ժամանակս իմ եղեւ: Որ ի
 թվին ՌԾԸին հրամանաւ կայսեր էլին ճար-
 տարքն ի Սուրբն Սոփիա մէրէմէթ եւ նորո-
 զումն առնել: Եւ մի ոմն ի նոցանէ ունելով
 135 կարիս, յուլացեալ ոչ էջ ի վայր, այլ ի ա-
 ման կրին միղեաց. եւ զայն խառնեալ ի կիր
 կամէր ի զործ ածել: Զոր Սուրբն Սոփիա
 ոչ հանդուրժեալ անօրէն զործոյն, այլ իսկոյն
 վերացուցեալ ընկէց զնա անօթովն յերկիր,
 140 ահներեւ ամենեցուն. եւ մարմինն բազմա-

114 նմանեցուցիչ: — 118 զոր եւ: — 120 զոր: —
 125 ոսկերերանիւ: — 129 զոր եւ: — 130 սոփիայ:
 — 133 սոփիայ: — 139 ընկեց: